

ինչըն եօթ գիւթան թաւիս, գիտին խիրկիս¹⁾, ընցկուն ձիու վուտ-
քիրու յէնջիւ գետըն կ'ճղուը:

Շատ կռուան, իրար չաղթիցըն (Գաւիթ սրտով չը զարկը-
ամա Խանդիւթ խաթիւն սպանիլիւ կ'զարկի):

Ձիանցտարուց էջան տակ, խասան քեռշտրի²⁾, դէն տարան,
դէն բիրին, զԽանդիւթ խաթուն իտի գետըն, զծիծ բունից, քեա-
մից. ինչ քեամից, իրիք պուտ արուն էնու ծծէն թափաւ գետըն.
խասաւ, գլեոխ պագնից, էսաց. — Հայ դել, ն'արիկ յերիկը փուխ,
ինչ տիւ իմ պնչէն խանիր:

Գոր ուրախացան:

Էլան, էկան ուրանց տուն: Խանդիւթ խաթընը տուն որ խա-
սան, ինք, խրօխպէր, Խանդիւթ խաթիւն իրիքեով էկան, նստան,
կերան, խման խաց գինին, ուրինց քէֆ էրին:

Խանդիւթ խաթիւն կանչից ուր խէր, ուր մէր, ուր ախպէր,
իպի էնդեղ, էսաց. — Էսա մարդն ի ասքար կուտրի, Օղան-Տողան
թագաւուրին էլ սպանի, էսաց, ի՛նչ կ'տաս էսա մարդուն փա-
ռուն³⁾:

Խանդիւթ խաթիւնը խէր, մէր, ախպէր ասին. — Տիւ մի աղ-
ջիկն իս, քի տուիր ինք էսա մարդուն փառուն. Էրանայ չուր Բեան-
դիւմաճին էլ տուիր ինք քի ջճէզ ւ):

Խարսնիս էրին, եօթ օր եօթ գիշիր ուրինց քէֆ ուրախու-
թին էրին:

Էլան, ուղտիր բարձին, ձիանք սարկիցին. էն քեռստուն փե-
րիզն էլ էկան, Գաւթի ձեռ ոտ պագնիցին, ասին. — Խալալ ըլնը
քիզի խանդիւթ խաթիւն: — Մէկ աւուր ճամբախ էլ խաս Գաւ-
թին, Խանդիւթ խանըմին կեացին:

Էկան, Բեանդիւմաճին խասան (Բեանդիւմաճին էն աղջիկ
կարաղուլ էր դրի). աղջիկ էկաւ Գաւթի դէմ կտրից, էսաց. — Գա-
ւթ, տիւ իմ խօր գիւթնը խաց կերար, տիւ իմ իրիս չ'էկար,

1) Հերկես: 2) Գօտեմարտ, ըմբշամարտ: 3) Պարգէ: ւ) Օտիտ: